ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Թորոսյան Վերոնիկա Աշոտի

Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերը. համեմատական վերլուծություն

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ. **Վահրամ Տեր-Մաթևոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. **Ռուբեն Մելքոնյան**
պ.գ.թ. **Նազելի Նավասարդյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թ. հուլիսի 13-ին, ժամը 12:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի Համաշխարհային պատմության 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4)։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հունիսի 11-ին։

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Ա. Փաշայան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գաղափարախոսությունները կարևոր դեր ունեն քաղաքական համակարգերի, ազգային ինքնությունների, մշակութային արժեքների և քաղաքակրթությունների ձևավորման գործում: Չնայած հետազոտողների այն կանխատեսումներին, որ գլոբալիզացիան և տեխնոլոգիական առաջընթացը կնվազեցնեն գաղափարախոսությունների նշանակությունը, դրանք շարունակում են մնալ ինքնությունների ընկալման, հասարակությունների համախմբման և ընդհանուր ռազմավարական նպատակների սահմանման համար կարևոր գործոն՝ ձևավորելով արժեքների և համոզմունքների ընդհանուր համակարգեր: Ազգային և համամարդկային գաղափարախոսությունների փոխակերպումներին զուգահեռ զարգանում են նաև անդրազգային գաղափարախոսությունները: Վերջիններս դուրս են գալիս առանձին ազգի կամ պետության սահմաններից՝ խթանելով բազմամակարդակ փոխազդեցությունները և միավորելով տարբեր հասարակությունների՝ քաղաքական, մշակութային կամ գաղափարական ընդհանրությունների հիման վրա: Այս առանձնահատկությունների շնորհիվ անդրազգային գաղափարախոսությունները կարող են օգտագործվել ինտեգրացիոն ծրագրերում՝ նպաստելով տարբեր հասարակությունների և պետությունների համագործակցությանը կամ համախմբմանը: Արտաքին և տարածաշրջանային քաղաքականությունում անդրազգային գաղափարական հիմք կիրառող երկրների օրինակ են Ռուսաստանն ու Թուրքիան: Որպես տարածաշրջանային քաղաքականությունում կիրառվող գաղափարական հիմքի օրինակ՝ ատենախոսությունում քննարկվում է եվրասիականությունը, որն օգտագործվում է Ռուսաստանի և Թուրքիայի ինտեգրացիոն ծրագրերում: Եվրասիականության անդրազգային բնույթը, գաղափարական բազմաշերտությունը և աշխարհաքաղաքական վերափոխումներին արձագանքելու կարողությունը թեմային հաղորդում են ինչպես գիտական, այնպես էլ կիրառական հետաքրքրություն:

Թեմայի գիտական կարևորությունն ու արդիականությունը

Եվրասիականությունը, որպես փիլիսոփայական-գաղափարական շարժում, ձևավորվել է 1920-ականների սկզբին՝ Եվրոպայում հաստատված ռուս մտավորականների շրջանում: Թեև այն սկզբնապես մշակվել էր որպես Ռուսաստանի քաղաքակրթական զարգացման այլընտրանքային տարբերակ, հետագայում հաջողությամբ հարմարեցվել է Թուրքիայի արտաքին և տարածաշրջանային քաղաքական ռազմավարական օրակարգին, ինչը մեծացնում է թեմայի գիտական արդիականությունն ու տեսական ուսումնասիրության հետաքրքրությունը: Եվրասիականության տարբեր, երբեմն նաև իրար հակասող մոտեցումները, շարունակում են զարգանալ և պահպանել կենսունակությունը ցայսօր:

Հետազոտության արդիականությունն ու գիտական կարևորությունը պայմանավորված են նաև նրանով, որ Ռուսաստանը ինտեգրացիոն ծրագրերի միջոցով ձգտում է ձևավորել եվրասիական ընդհանուր տարածաշրջանային ինքնություն՝ հիմնվելով պատմամշակութային և քաղաքակրթական ընդհանրությունների վրա: Միևնույն ժամանակ, Թուրքիան վերահիմաստավորում է «թյուրքական աշխարհի» հայեցակարգը՝ այն լրացնելով եվրասիականության միջոցով և ընդլայնելով դրա քաղաքական, աշխարհագրական ու ռազմավարական սահմանները: Ռուսաստանի և Թուրքիայի արտաքին և տարածաշրջանային քաղաքականությունը անմիջական ազդեցություն է ունենում հետխորհրդային տարածաշրջանի երկրների, այդ թվում, իհարկե, Հայաստանի վրա: Այս հանգամանքը կարևորում է նշված երկրների ռազմավարական ուղղությունների և դրանց գաղափարական հիմքերի խորքային ուսումնասիրությունը, որի համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ստանում եվրասիականության համակողմանի և քննական վերլուծությունը: Թեմայի ուսումնասիրությունն ունի կարևոր տեսամեթոդաբանական նշանակություն, քանի որ օգնում է հասկանալ թե ինչպիսի մեխանիզմներով և պատմաքաղաքական գործընթացների ազդեցությամբ են անդրազգային գաղափարախոսությունները վերափոխվում, ադապտացվում և գործիքայնացվում: Հենց այս շարժառիթով էլ պայմանավորված է եվրասիականության հանդեպ չնվազող գիտական հետաքրքրությունը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերի համեմատական վերլուծությունը: Սահմանված նպատակից բխող խնդիրներն են.

ա/ համեմատել եվրասիականության ռուսական ու թուրքական ուղղությունների ձևավորման փուլերը և դրանց նպաստած պատմական հիմքերը,

բ/ վեր հանել և համեմատել եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերի հիմքում ընկած հատկանիշները,

գ/ ցույց տալ ռուսական և թուրքական տարածաշրջանային ինտեգրացիոն ծրագրերում եվրասիականության գործիքայնացումը,

դ/ կատարել այս պետությունների մրցակցությանը և/կամ համագործակցությանը նպաստող գաղափարական բաղադրիչի վերլուծություն,

ե/ վերլուծել Ռուսաստանի և Թուրքիայի կողմից եվրասիական ինտեգրացիոն ծրագրերի շրջանակներում իրականացվող քայլերը, որոնք ուղղված են պատմամշակութային ընդհանրություններ ունեցող ժողովուրդների միջև տարածաշրջանային նոր ինքնության ձևավորմանը:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակը

Նկատի առնելով, որ ատենախոսության հետազոտության առարկան առավելապես տեսական համեմատական վերլուծությունն է՝ ուսումնասիրության ժամանակագրական սահմանն ընդգրկում է 1921 թվականին «Ելք դեպի Արևելք»[1] թեմատիկ առաջին հոդվածների ժողովածուի տպագրումից մինչև եվրասիականության արդի տեսական քննարկումները և կիրառական դրսևորումները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը

Ուսումնասիրության համար օգտագործվել են որակական հետազոտության մեթոդներ: Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերի համադրելի հատկանիշների առանձնացման համար օգտագործվել է դիսկուրս վերլուծության մեթոդը: Գաղափարական ցուցիչների քննության համար կիրառվել է համեմատական վերլուծության մեթոդը: Համեմատության մեջ են դրվել ռուսական և թուրքական հայեցակարգերում հիմնային համարվող գաղափարները: Վերլուծվել են դրանցում առկա նմանություններն ու տարբերությունները: Արված համեմատության արդյունքում եվրասիականության ռուսական և թուրքական տարբերակներում ընդհանուր օրինաչափությունների վեր հանման համար օգտագործվել է համեմատական թեմատիկ վերլուծությունը: Երրորդ գլխի համար օգտագործվել է բազմակի քեյս-սթադի (multiple case study) մեթոդը: Այս մեթոդի միջոցով ներկայացվել է եվրասիականության գործիքայնացումը ռուսական և թուրքական տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերում՝ Եվրասիական տնտեսական միության և Թյուրքական պետությունների կազմակերպության օրինակներով: Անդրազգայնություն (transnationalism) տեսական շրջանակը, որպես երևույթը բացատրող համակարգային դիտանկյուն, օգտագործվել է եվրասիականության գործնական կիրառելիության վերլուծության համար:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության մեջ առաջին անգամ համակարգվել և ներկայացվել են եվրասիականության բովանդակային հիմքը կազմող գաղափարական հատկանիշները՝ Եվրասիայի աշխարհագրական սահմանումն ու աշխարհաքաղաքական բևեռի ձևավորման գաղափարը, հակաարևմտականությունը, եվրասիական ազգայնականության, կրոնի դերը, ընդհանուր մշակութային հիմքի և եվրասիական յուրահատուկ քաղաքակրթության գաղափարը: Դրանք թուրքական և ռուսական տարբերակներում համադրվել են համեմատական թեմատիկ վերլուծության միջոցով՝ բացահայտելով հիմնային ընդհանրություններն ու տարբերությունները:

[1] Исход к Востоку, Предчувствия и свершения. Утверждение евразийцев, София, Типография «Балканъ», 1921.

Եվրասիականության գործնական կիրառության ուսումնասիրության նպատակով առաջին անգամ որպես տեսական հիմք օգտագործվել է անդրազգայնությունը՝ Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանային ինտեգրացիոն ծրագրերի գաղափարական հիմքերի ուսումնասիրության համար: Ատենախոսությունում առաջարկվում է անդրազգայնությունը կիրառել որպես գաղափարախոսական հետազոտությունների տեսական դիտանկյուն, տվյալ պարագայում՝ եվրասիականության համատեքստում: Որպես անդրազգային ինտեգրացիոն մոդելի տեղայնացման օրինակներ, առաջին անգամ համեմատական վերլուծության են ենթարկվել Եվրասիական տնտեսական միության և Թյուրքական պետությունների կազմակերպության գաղափարական հիմքերը՝ նպատակ ունենալով բացահայտել Ռուսաստանի և Թուրքիայի կողմից եվրասիականության գործիքայնացման առանձնահատկությունները և ցույց տալ դրա գաղափարական ճկունությունն ու բազմաշերտ կիրառելիությունը:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Հետազոտությունը կարող է օգտակար լինել թեմայով հետաքրքրվող հետազոտողների համար՝ օգտագործվելով որպես տեսական հիմք պետությունների արտաքին քաղաքականության գաղափարական բաղադրիչների վերլուծության և դրանց նշանակության բացահայտմանը միտված ուսումնասիրություններում: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել նաև Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությանը վերաբերող ուսումնական և գիտական նյութերի մշակման մեջ:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը և գրականության տեսություն

Հարկ է նշել, որ եվրասիականությունն ուսումնասիրող հեղինակների աշխատություններում այն քննարկվում է գաղափարախոսություն[2], քաղաքակրթական կամ աշխարհաքաղաքական հայեցակարգ[3], գաղափարական շարժում[4] և այլ բնորոշիչներով: Գիտական գրականության մեջ եվրասիականության թե՛ ռուսական, թե՛ թուրքական տարբերակներին տրվող գնահատականների նման բազմազանությունը հետազոտողների շրջանում երբեմն գիտական շփոթ է առաջացնում: Տարընթերցումների առիթ չտալու համար անհրաժեշտ է բացատրել ատենախոսությունում եվրասիականության զարգացման տարբեր փուլերում ռուսական ու թուրքական հայեցակարգերին տրված ձևակերպումները: 1920-ականներին ռուս մտավորականների կողմից սահմանված եվրասիականությունը և Եվրոպայում ծավալած գործունեությունը սահմանվում է

[2] Տե՛ս օր.՝ P. Pizzolo, Eurasianism: An ideology for multipolar world, Libera Universita, 2019:

[3] Տե՛ս օր.՝ M. Laruelle, Russian Eurasianism: an ideology of empire, Baltimore, 2008; E. Akçali and M. Perinçek, Kemalist Eurasianism: An Emerging Geopolitical Discourse in Turkey, Geopolitics, 14:3, 2009.

[4] Տե՛ս օր.՝ M. Bassin, Eurasianism 'Classical' and 'Neo': The Lines of Continuity. In Beyond the Empire: Images of Russia in the Eurasian Cultural Context, 2008:

փիլիսոփայական-գաղափարական շարժում բնորոշմամբ: Գումիլյովյան եվրասիականությունը բնութագրվում է քաղաքակրթական հայեցակարգ ձևակերպմամբ: 1990-ականներին Ռուսաստանում Ալեքսանդր Դուգինի, Բորիս Երասովի, Ալեքսանդր Պանարինի և այլոց աշխատություններում ձևակերպում ստացած եվրասիականությունը դիտարկվում է որպես գաղափարախոսություն և անվանվում է նեո-եվրասիականություն: Թուրքական եվրասիականության իրարից տարբերվող մեկնաբանությունները, մոտեցումները և դրանց տեղայնացված տարբերակները արդեն գոյություն ունեցող գաղափարախոսությունների շրջանակում, օրինակ՝ նեո-օսմանական եվրասիականություն կամ քեմալական եվրասիականություն[5], ատենախոսության մեջ ներկայացվում են եվրասիական հայեցակարգ բնորոշմամբ:

Եվրասիականության ռուսական հայեցակարգի ձևավորման, տարածման ու հետագա ճյուղավորման դրդապատճառները հասկանալու համար ուսումնասիրվել են հայեցակարգի հիմնադիրներ Նիկոլայ Տրուբեցկոյի[6], Պյոտր Սավիցկու[7], Պյոտր Սուվչինսկու[8], գաղափարական շարժման ակտիվ անդամներ Լև Կարսավինի[9], Գեորգի Ֆլորովսկու[10], Գեորգի Վերնադսկու[11] հիմնական թեմատիկ աշխատությունները, ինչպես նաև նրանց

---

[5] Տե՛ս օր.՝ Akçali E. and Perinçek M., Kemalist Eurasianism: An emerging geopolitical discourse in Turkey, Geopolitics, 14:3, 2009; Tüysüzoğlu G., Strategic Depth: A Neo-Ottomanist Interpretation of Turkish Eurasianism, Mediterranean Quarterly, vol. 25 no. 2, Project MUSE, 2014.

[6] Н. С. Трубецкой, Об истинном и ложном национализме, Исход к Востоку: предчувствия и свершения, София, 1921; Русская проблема, «Евразийская хроника», вып. 2, Прага, 1925; О государственном строе и форме правления, «Евразийская хроника», вып. 8, Париж, 1927; Общеевразийский национализм, Евразийская хроника, Париж, 1927; О туранском элементе в русской культуре, Вестн. МГУ. Сер. «Социально-политических исследования», 1990; Н.С. Трубецкой, Европа и человечество, София: Российско-болгарское книгоиздательство, 1920.

[7] Европа и Евразия: (по поводу бр. кн. Н.С. Трубецкого «Европа и человечество»), Рус. Мысль., 1921; Континент- Океан: (Россия и мировой рынок), Исход к Востоку: предчувствия и свершения, 1921; Миграция культуры, Исход к Востоку: предчувствия и свершения, София, 1921; Поворот к Востоку, Исход к Востоку: предчувствия и свершения, София, 1921; Евразийство, Евразийский временник, Берлин: Евраз. книгоизд-во, 1925; Евразийство как исторический замысел, Наследие Чингисхана: [сборник], Москва: Эксмо, 2007; Континент Евразия, Москва, 1997.

[8] Сила слабых, Исход к Востоку: предчувствия и свершения, София: Рос.Болг. книгоизд-во, 1921; Эпоха веры, Исход к Востоку: предчувствия и свершения, София, 1921; Идеи и методы, Евразийский временник, Берлин: Евраз. книгоизд-во, 1925; Монархия или сильная власть, Евразийская хроника, Париж, 1927; Письма: из переписки с П.П. Сувчинским: [Н.А. Сетницкий – П.П. Сувчинскому 11 июля 1927, Харбин. П.П. Сувчинский – Н.А. Сетницкому 18 окт. 1927, Кламар] Из истории философско-эстетической мысли 1920–1930-х годов, Москва: ИМЛИ РАН, 2003.

[9] Европа и Евразия: [рец. на кн.: Исход к Востоку: предчувствия и свершения. Утверждение евразийцев. Кн. 1, София, 1921; На путях. Утверждение евразийцев. Кн. 2, Берлин, 1922; Ответ на статью Н.А. Бердяева об евразийцах, Путь, Париж, 1926; Евразийство и монизм, Евразия, Париж, 1929.

[10] О народах неисторических, «Исход к Востоку», София 1921; Г. Флоровский, Из прошлого русской мысли, Москва, 1998; Письмо к П.Б. Струве о евразийстве; Из прошлого русской мысли, Москва, 1998; Вечное и преходящее в учении русских славянофилов, Славянски глас., София, 1921.

[11] Киевская Русь, Тверь: Леан; Москва: Аграф, 2000; Опыт истории Евразии с половины VI века до настоящего времени, Берлин: Изд. евразийцев, 1934; Г.В. Вернадский [письма Г.В. Вернадского А.С.

գործունեությանն ու առհասարակ ռուսական եվրասիականությանը նվիրված ռուս և այլազգի հետազոտողների աշխատությունները[12]: Ռուսական եվրասիականության գաղափարական հիմքերը հասկանալու համար ուսումնասիրվել են հիմնադիրների կողմից իրենց հրապարակումներում բազմիցս հիշատակված Կոնստանտին Լեոնտևի[13] և Նիկոլայ Դանիլևսկու[14] գաղափարերը: Հայեցակարգում առաջ քաշված գաղափարների և առաջնահերթությունների վերլուծության համար ուսումնասիրվել են անդամների նամակները[15], ծրագրային և մամուլի հրապարակումները[16]:

1930-ական թվականներից սկսած ռուսական եվրասիականությունը սկսում է թուլանալ, ներքին գաղափարական անհամաձայնություններով պայմանավորված, և նորից վերելք է ապրում, երբ Լև Գումիլյովը ստանձնում է առաջնորդությունն ու սկսում է

Ященко], Русский Берлин, 1921–1923: по материалам арх. Б.И. Николаевского в Гуверов. ин-те / сост., 2003.

[12] Н. Бердяев, Евразийцы, Россия между Европой и Азией: Евразийский соблазн, Москва, 1993; В. Цымбурский, Две Евразии: омонимия как ключ к идеологии раннего евразийства, Евразия. Люди и мифы: сб. ст. из журн. «Вестн. Евразии», Москва, 2003; К истории «евразийства»: Москва Горький и П.П. Сувчинский / публ. Дж. Мальмстада, СПб.:Феникс, 2001; В. Быстрюков, В поисках Евразии: обществ.-полит. и науч. деятельность П.Н. Савицкого в годы эмиграции (1920–1938 гг.): монография, Самара, 2007; А. Горяев, Евразийство как явление культуры России: историко- философский аспект; Ю. Колссннченко, Концепция личности в философии евразийства, Москва, 1994; Ш. Султанов, Дух евразийца, Наш современник, Москва, 1992; M. Laruelle, Russian Eurasianism: an ideology of empire, Baltimore, 2008; M. Bassin, The Gumilev mystique: biopolitics, Eurasianism, and the construction of community in modern Russia, Cornell University Press, 2016; V. Naxera, The West, Globalisation and Pussy Riot: Portrayals of Russia and Eurasia's Enemies in the Work of Aleksandr G. Dugin, Central European Journal of International and Security Studies 12, no. 1: 119–141; P. Rangsimaporn, Interpretations of Eurasianism: Justifying Russia's role in East Asia, Europe-Asia Studies, 2006, 58:03, 371-389; R. Sakwa, The Age of Eurasia?, in The Politics of Eurasianism: Identity, Popular Culture and Russia's Foreign Policy, ed. by Mark Bassin and Gonzalo Pozo, London; New York, 2017;
Լ. Հովսեփյան, Եվրասիականության և աշխարհագրական դետերմինիզմի նկատմամբ թուրքական զինվորական շրջանակների մոտեցումների շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVIII, Երևան, 2011, 188-200; Ռ. Սաֆրաստյան, Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև, Երևան 2003, 96; Ռ. Սաֆրաստյան, Թուրքական աշխարհաքաղաքականության մի շարք հայեցակարգային եզրույթներ ու տեսություններ. ծագումնաբանության հարցեր (20-րդ դարի վերջ), հատված «Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ ԱԶԿ կառավարման ժամանակահատվածում (2002-2012թթ.)» գրքից, Երևան, 2020; Ա. Սիմավորյան, Թուրքական եվրասիականության հարցերի շուրջ, HAL, 2022, 5:

[13] К. Леонтьев, Восток, Россия и славянство, Москва, 1913; Ю. Андронов, Русская социально-политическая мысль XIX – начала XX в.: К. Н. Леонтьев, Москва, 2000; А. Клементьев, Н. Данилевский и К. Леонтьев как предтечи геополитики, Вестн. Челяб. гос. ун-та, Сер. 10, Востоковедение. Евразийство. Геополитика, 2003; В. Пащенко, Социальная философия евразийства, Москва, 2003.

[14] Н. Данилевский, Россия и Европа, С. Петербург, 1895.

[15] Письмо С.Н. Булгакова П.Н. Савицкому от 30 дек. 1924 г., Вопр. Философии, 1994; Открытое письмо П.Н. Савицкого – В.Н. Ильину, Евразийская хроника, Берлин, 1935; Письмо Н.С. Трубецкого П.Н. Савицкому от 8–10 декабря 1930 г., публ. О.А. Казниной, Славяноведение, 1995; Письма к П.П. Сувчинскому, 1921–1928 / Н.С. Трубецкой, Москва: Библиотека-фонд «Русское Зарубежье», 2008.

[16] Евразийство. Декларация, Формулировка, Тезис. Берлин: Издательство евразийцев, 1926; Евразийская хроника, Вып. 1-4. Прага, 1925. Вып. 5. Париж, 1926. Вып. 7-9. 1927. Вып. 10. 1928; Евразийский временник, Кн.3. Берлин, 1923; Кн. 4. Берлин, 1925; Кн. 5. Париж, 1927; Евразийский сборник: Политика. Философия. Россиеведение, Кн. 6. Прага, 1929.

իրեն անվանել «վերջին եվրասիական»: Նա գտնում էր, որ հեղինակ տեսաբանների առաջարկած հիպոթեզում պակասում էր էթնոգենեզի տեսությունը[17]: Գումիլյովի հայացքների հիմնական առանձնահատկությունը «անտառի և տափաստանի» հակադրությամբ պայմանավորված ժողովուրդների համակեցության գաղափարն էր: Այս միտքը հետագայում իր աշխատություններում շարունակում էր զարգացնել նաև Ալեքսանդր Դուգինը՝ եվրասիական աշխարհակարգը ներկայացնելով թալասոկրա-տիայի և թելուրոկրատիայի միջև պայքարի համատեքստում[18]: Գումիլյովից հետո ռուսական եվրասիականությունը որպես գաղափարական-քաղաքական ուղղություն վերարտադրվեց Խորհրդային Միության փլուզումից հետո՝ նեո-եվրասիականություն ընդհանուր անվամբ:

Իրենց աշխատանքներում եվրասիական գաղափարները շարունակեցին զարգացնել Ալեքսանդր Պանարինը, Ալեքսանդր Դուգինը, Էդուարդ Բագրամովը, Բորիս Երասովը, Ալեքսանդր Պրոխանովը, Ռուստեմ Վախիտովը, Ալեքսանդր Դուգինը[19]:

---

[17] Л. Гумилев, Ритмы Евразии: эпохи и цивилизации, Москва: Экопрос, 1993; Л. Гумилев, Этногенез и биосфера земли, Москва, 1994; Л. Гумилев, Полное собрание сочинений, Москва: Издательство АСТ, 2018; M. Bassin, Lev Gumilev and Russian National Identity During and After the Soviet Era. In Nationalism and Ethnosymbolism: History, Culture and Ethnicity in the Formation of Nations, ed. by A. S. Leoussi and S. Grosby Edinburgh: Edinburgh University Press, 2007; M. Bassin, Eurasianism "Classical" and "Neo": The Lines of Continuity, in "Beyond the Empire: Images of Russia in the Eurasian Cultural Context," (ed.) by M. Tetsuo, Sapporo: Hokkaido University Press, 2008.

[18] Թալասոկրատական և թելուրոկրատական տերությունների, այսինքն՝ ծովային և ցամաքային տերությունների միջև եղած տարբերությունը Հին Հունաստանում քննարկել է Թուկիդիդեսը: Այդ ժամանակի դասական օրինակներից են Աթենքը, որն իր իշխանությունը ստանում էր առևտրից և արհեստներից, և Սպարտան, որն ապրում էր գյուղատնտեսությամբ: Թելուրոկրատիան վերաբերում է ցամաքային կայսրություններին, որոնք տարածվում են մայրցամաքային տիրույթներում, որպես կանոն՝ առանց որևէ անդրծովյան տարածքների: Թալասոկրատիան տիրույթ է, որը սովորաբար վերահսկում է առափնյա և անդրծովյան տարածքները (կղզիներ, ափամերձ գաղութներ, ափամերձ ամրոցներ և այլն), բայց հազվադեպ՝ երկրի ներքին տարածքը: Մանրամասն տե՛ս Medium, "Alexander Dugin: Eurasianism and the Tellurocracy-Thalassocracy Distinction", https://hercynianforest.medium.com/alexander-dugin-eurasianism-and-the-tellurocracy-thalassocracy-distinction- e4478150ea8f

[19] А. Панарин, Россия в цивилизационном процессе (между атлантизмом и евразийством), Москва: ИФ РАН, 1994; А.С. Панарин, «Вторая Европа» или «третий Рим»? Избранная социально-философская публицистика, Москва: ИФ РАН, 1996; А. Панарин, Русский Архипелаг: Сетевой проект «Русского Мира», http://www.archipelag.ru/authors/panarin_aleksandr/?library=1237; А. Панарин, Политология. О мире политики на Востоке и на Западе, Москва: Книжный дом «Университет», 1999; А. Дугин, Мистерии Евразии, Москва, 1996; А. Дугин, Абсолютная Родина, Москва, 1999; А. Дугин, Основы Евразийства, Москва, 2002; А. Дугин, Проект «Евразия», Москва, 2004; А. Дугин, Четвёртая политическая теория, Москва: Амфора, 2009; Р. Вахитов, Евразийство и социализм, 6 мая 2022, https://rus-lad.ru/news/r-vakhitov-evraziystvo-i-sotsializm/; Р. Вахитов, Культура и цивилизация: Евразийство: мифы революционной эпохи, Проблемы цивилизационного развития, т. 1, № 1, 2019; Э. Баграмов, Постсоветская интеграция-реальность или мираж?, Независимая газета, 18.03.2003, https://www.ng.ru/ideas/2003-03-18/10_sng.html; Б. Ерасов, Цивилизация: слово-термин-смысл, Цивилизации и культуры, Вып. 2, Россия и Восток: цивилизационные отношения, Москва, 1995; Б. Ерасов, О геополитическом и цивилизационном устроении Евразии, Евразия, No.5, 1996; Б. Ерасов, Социокультурные и геополитические принципы евразийства. Историческая психология и социология истории 2/2017; А. Проханов, Евразийский проект —

Անդրադառնալով Ռուսաստանի ինքնությանը՝ նշում էր, որ այն տարբերվում է և՛ Արևմուտքից, և՛ Արևելքից, ինչը «դրական արժանիք է»: Դուգինը հեղինակել է «Չորրորդ քաղաքական տեսությունը», որը, հեղինակի կարծիքով, պետք է առաջին եռյակից հետո՝ լիբերալիզմ, սոցիալիզմ և ֆաշիզմ, դառնա քաղաքականության զարգացման հաջորդ քայլը[20]: Եվրասիականության թուրքական հայեցակարգերի ձևավորման պատճառների ու գաղափարական հենքի ուսումնասիրման համար հարկ է նկատի ունենալ ռուսական դասական եվրասիականության ու թուրքական եվրասիական հայեցակարգի միջև ընկած ժամանակագրական մեծ տարբերությունը:

Թուրք մտավորականները եվրասիականությանը ծանոթացան 1980-1990-ական թվականներին, երբ Ռուսաստանում սկսվում էր նեո-եվրասիականության ձևավորման շրջափուլը: Թուրքական եվրասիականությունից բխող հիմնական դատողություններին ծանոթանալու համար ուսումնասիրվել են Դողու Փերինչեքի[21], Էմել Աքչալըի և Մեհմեթ Փերինչեքի[22], Դեմիրհան Էրդեմի[23], Աբդուրահման Քյուլունքի[24], Մեշդի Իսմայիլովի[25], Շեներ Աքթյուրքի[26], Ֆաթիհ Աքգյուլի[27], Վուգար Իմանովի[28], Մարլեն Լարուելլի[29], Էմրե

единственная альтернатива деградации и распаду, 21.08.2012, https://ava.md/ru/stati/russia/aleksandr-prohanov-evraziyskiy-proekt/; Международное Евразийское движение, http://med.org.ru/topic/16.

[20] Александр Дугин; философ, политик, социолог, http://dugin.ru/proekty/chetvertaya-politicheskaya-teoriya.

[21] D. Perinçek, Avrasya Seçeneği: Türkiye için bağımsız dış politika, İstanbul: Kaynak, 1996; D. Perinçek, Seçenek var, Aydınlık, 15 Şubat 2009; D. Perinçek, Kürşat, Pekos Bill'in at uşağı olur mu?, Aydınlık, 21 Ekim 2012; Догу Перинчек: Наша цель - завершение Кемалистской революции, 26.05.2018, https://www.geopolitica.ru/article/dogu- perinchek-nasha-cel-zavershenie-kemalistskoy-revolyucii.

[22] E. Akçalı and M. Perinçek, Kemalist Eurasianism: An Emerging Geopolitical Discourse in Turkey, Geopolitics, vol. 14:3, 2009; M. Perincek, Avrasyacılık: Türkiyedeki Teori ve Pratigi, İstanbul: Kaynak Yayınları, 2016.

[23] D. Erdem, Dünya'da ve Türkiye'de Avrasya ve Avrasyacılık: algılamalar yaklasımlar ve stratejiler, Yenişehir, Ankara: Barış Kitap, 2016.

[24] A. Külünk, Dünyada ve Türkiye'de Avrasyacılık, İstanbul: Bilgeoğuz, 2020.

[25] M. İsmayilov, Türkiye ve Rusya ekseninde Avrasyacılık, doktora tezi, Bursa, 2011.

[26] S. Akturk, Counter-Hegemonic Visions and Reconciliation through the Past: The Case of Turkish Eurasianism, Ab Imperio, 4, 2004.

[27] F. Akgül, Rusya ve Türkiye'de Avrasyacılık, IQ Kültür Sanat Yayıncılık: İstanbul, 2009.

[28] V. İmanov, Avrasyacılık: Rusya'nın Kimlik Arayışı, İstanbul: Küre Yayınları, 2008; V. İmanov, Rusya'nın medeniyetsel kimlik inşası olarak Avrasyacılık, doktora tezi, Marmara üniversitesi, İstanbul, 2007.

[29] M. Laruelle, The Two Faces of Contemporary Eurasianism: An Imperial Version of Russian Nationalism, Nationalities Papers, Vol. 32, No. 1, March 2004; M. Laruelle, Russian Eurasianism: An Ideology of Empire, Washington: Woodrow Wilson Centre Press, 2008; M. Laruelle, Eurasia, Eurasianism, Eurasian Union; terminological gaps and overlaps, Ponars Eurasia Policy Memo No. 366, 2015; M. Laruelle, Eurasianism and the European Far Right, Lexington Books, 2015.

Էրշենի[30], Օզգյուր Թյուֆեքչու[31], Լերնա Յանըքի[32], Գյոքթյուրք Թյոյսյուզողլուի[33] գիտական աշխատանքները: Դողու Փերինչեքը եվրասիականությունը մեկնաբանում է սոցիալիզմի տեսանկյունից՝ առանձին տարրեր ներառելով նաև «Հայրենիք» կուսակցության իր ծրագրային ելույթներում: Մասնավորապես՝ Փերինչեքի համար ռուսական եվրասիականության գլխավոր առանձնահատկությունը հակաարևմտյան ուղղվածությունն է, որի մեջ ընդգրկվում է նաև ԱՄՆ-ն:

Եվրասիականության համատեքստում ռուս-թուրքական հարաբերությունների վերլուծության համար ուսումնասիրել են Ֆաթմա Քելքիթլիի[34], Ջեյմս Վարլիոլայի և Էգեմեն Բեզջիի[35], Պավել Շլիկովի[36], Իգոր Տորբակովի[37], Օքթայ Աքսոյի[38], Թիմուր Ախմետովի[39], Աքթյուրքի[40] գիտական հոդվածներն ու մենագրությունները, երկու պետությունների կառավարությունների, արտաքին գործերի նախարարությունների կայքերը, պաշտոնական օրաթերթերը և պարբերական մամուլը՝ պաշտոնական ելույթներից, հայտարարություններից, լրատվական կոնֆերանսներից, հանդիպումներից, համատեղ հայտարարություններից հետազոտության համար կարևոր տեղեկատվություն ստանալու նպատակով[41]: Ռուս-թուրքական հարաբերությունները

---

[30] E. Erşen, The Evolution of ''Eurasia'' as a Geopolitical Concept in Post–Cold War Turkey, Geopolitics, vol. 18:1, Routledge, 2012; Geopolitical Traditions in Turkey; Turkish Eurasianism, The politics of Eurasianism-ed. by Bassin M. and Pozo G., Rowman, 2017; The return of Eurasianism in “Turkey; relations with Russia and beyond: Turkey’s pivot to Eurasia”, ed. by Erşen E. and Köstem S., Routledge, 2019.

[31] O. Tufekci, Ahmet Davutoğlu’s Foreign Policy Understanding: A Blend of Westernist and Multiculturalist Eurasianism, The Arab World Geographer, Vol. 17, No. 3, 2014; O. Tufekci, Turkish Eurasianism and its impact on Turkish foreign policy in the post-Cold War Turkey, Coventry University, 2015.

[32] L. Yanık, Constructing Turkish ''Exceptionalism'': Discourses of Liminality and Hybridity in Post-Cold War Turkish Foreign Policy, Political Geography 30(2), 2011; L. Yanık, Allies or partners? An appraisal of Turkey's ties to Russia; 1991-2007, East European quarterly 41(3), 2007; L. Yanık, Debating Eurasia: Political Travels of a Geographical Concept in Turkey, Uluslararasi İliskiler, Vol. 16, No. 63, 2019.

[33] G. Tüysüzoğlu, Milenyum sonrası Türk dış politikası: Yeni Osmanlıcılık ve Türk Avrasyacılığı ekseninde inşa edilen bir pragmatizm, Alternatif Politika, cilt 5, sayı 3, Aralık 2013; G. Tüysüzoğlu, Strategic Depth: A Neo-Ottomanist Interpretation of Turkish Eurasianism, Mediterranean Quarterly, vol. 25 no. 2, 2014.

[34] F. Kelkitli, Turkish-Russian relations: competition and cooperation in Eurasia, Routledge, 2017.

[35] J. Warhola and E. Bezci, The Return of President Putin and Russian–Turkish Relations: Where Are They Headed?, SAGE, 2013.

[36] П. Шлыков, Евразийство и евразийская интеграция в политической идеологии и практике Турции, Сравнительная политика.N 8(1), 2017.

[37] I. Torbakov, Making Sense of the Current Phase of Turkish-Russian Relations, The Jamestown Foundation, 2007.

[38] O. Aksoy, Turkish-Russian Cooperation in Eurasia, Foreign Policy, the Foreign Policy Institute, Vol. 34 (3-4), 2008.

[39] T. Akhmetov, The Eurasian vector in Russian-Turkish relations, Turkeyscope Vol. 2, No. 5, April 2018.

[40] S. Akturk, Turkish-Russian Relations after the Cold War (1992-2002), Turkish Studies, Vol. 7, No. 3, 2006.

[41] ЕЭК, Обращение Председателя Высшего Евразийского экономического совета, Президента Российской Федерации Владимира Путина к главам государств – членов ЕАЭС по случаю председательства России в органах Союза в 2023 году, 23.01.2023; ЕЭК, Обращение Председателя Высшего Евразийского экономического совета, Президента Российской Федерации Владимира Путина к главам государств – членов ЕАЭС по случаю председательства России в органах Союза в 2023 году; Kremlin.ru, Выступление на

եվրասիականության դիտանկյունից ուսումնասիրող Ախմեդովը գտնում է, որ թե՛ Ռուսաստանը, թե՛ Թուրքիան զոհ են դառնում Եվրոպայի վարած երկդիմի քաղաքականությանը: Նա գտնում է, որ եվրասիականությունը գաղափարական այն հարթակն է, որի միջոցով հնարավոր կլինի դիմակայել Արևմուտքի ճնշումներին: Հետևաբար ռուս-թուրքական հարաբերությունները կարող են ավելի ամրապնդվել: Մինչդեռ, Տորբակովը իր աշխատություններում նշում է, որ երկու պետությունների մոտ Վաշինգթոնից ու Բրյուսելից առաջացած հիասթափությունը չի կարող փիլիսոփայական լուրջ հարթակ դառնալ՝ երկկողմ ամուր համագործակցություն սկսելու համար: Նա նշում է, որ նեո-եվրասիականությունը ոչ մի դեպքում չի կարող դառնալ այն ընդհանուր գաղափարախոսությունը, որը կմիավորի երկու «եվրասիական մեծ տերություններին»[42]: Այս միտքը շարունակում է Լարուելը: Նա նշում է, որ «հետիմպերիալիստական տրավման» հաղթահարելու ճանապարհին եվրասիականությունը հրաշալի միջոց կարող է դառնալ և՛ Ռուսաստանի, և՛ Թուրքիայի համար: Այնուամենայնիվ, այս երկու առանցքները միացնելուն ուղղված Դուգինի ջանքերը և Թուրքիայում Փերինչեքի հետ համագործակցության հասնելը երկու կողմերին չեն հանգեցնի ընդհանուր հայտարարի՝ Եվրասիայում Ռուսաստանի և Թուրքիայի գերիշխանության հասնելու չդադարող պայքարի պատճառով[43]:

Եվրասականները փորձում են ընդգծել կա՛մ Ռուսաստանի, կա՛մ Թուրքիայի առաջնությունը եվրասիայում՝ տալով վերոնշյալ պետություններից մեկին կենտրոնի նշանակություն: Երկու երկրների կողմից տարածաշրջանային քաղաքականության մեջ եվրասիական գաղափարների օգտագործումը ցույց տալու համար ուսումնասիրվել են առաջին դեմքերի, կառավարության անդամների ելույթներն ու հայտարարությունները,

---

собрании, посвященном 1000-летию Казани, 26.08.2005; Kremlin.ru, Выступление на торжественном собрании, посвященном 450-летию вхождения Башкирии в состав России, 11.10.2007; Kremlin.ru, Заседание международного дискуссионного клуба «Валдай», 19.09.2013; OTS, Press Release of the Fifth Summit of the Turkic Council, 11.09.2015. https://www.turkicstates.org/en/haberler/press-release-of-the-fifth-summit-of-the-turkiccouncil_552; OTS, Secretary General of the Turkic Council, Baghdad Amreyev Participated in the International Seminar on "Islamic Rapprochement Initiative," 15. 05.2019. https://www.turkicstates.org/en/haberler/secretary-general-of-the-turkic-council-baghdadamreyev-participated-in-the-international-seminar-on-islamic-rapprochement-initiative_1817;
OTS, Speech by the Turkic Council Secretary General Baghdad Amreyev at the Informal Summit of the Turkic Council Held on 31 March 2021,
https://www.turkicstates.org/en/haberler/speech-by-the-turkic-council-secretary-generalbaghdad-amreyev-at-the-informal-summit-of-the-turkic-council-held-on-31-march-2021_2222; President.uz, Address by President of the Republic of Uzbekistan Shavkat Mirziyoyev at the Meeting of the Council of Heads of State of the Organization of Turkic States, 11.11.2022, https://president.uz/en/lists/view/5687.

[42] Տե՛ս I. Torbakov, Eurasian idea could bring together ertswhile enemies Turkey and Russia, Eurasianet, https://eurasianet.org/eurasian-idea-could-bring-together-ertswhile-enemies-turkey-and-russia.

[43] M. Laruelle, The Two Faces of Contemporary Eurasianism: An Imperial Version of Russian Nationalism, Nationalities Papers, Vol. 32, No. 1, March 2004.

Եվրասիական տնտեսական միության և Թյուրքական պետությունների կազմակերպության պաշտոնական կայքէջերը, դրանցում տեղ գտած հոդվածները, նորությունները և հայտարարությունները, եվրասիական հետխորհրդային տարածաշրջանին վերաբերվող հետազոտությունները[44]: Հատկապես ուշադրություն է դարձվել եվրասիականության միջոցով տարածաշրջանային ինքնության ձևավորման խնդրին և դրա ուսումնասիրվածությանը[45]:

Նկատի են առնվել նաև եվրասիականությամբ և եվրասիական տարածաշրջանի ուսումնասիրությամբ զբաղվող գիտավերլուծական կենտրոնների հրապարակած նյութերը[46]: Թե՛ ռուսական, թե՛ թուրքական եվրասիականության առանձին գաղափարները հետազոտողների կողմից բազմիցս ուսումնասիրվել են: Թյուֆեքչին, Էրդեմը, Էրշենը, Քյուլունքը իրենց աշխատություններում կատարել են նաև ռուսական և թուրքական եվրասիական հայեցակարգերի ընդհանուր բնութագրերի և դրանց ժամանակագրական զարգացման համեմատական քննություն, մինչդեռ ատենախոսությունը նպատակ ունի լրացնել գիտական գրականությունում առկա բացը՝ եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերի հիմքում ընկած

---

[44] A. Libman, Does Integration Rhetoric Help? Eurasian Regionalism and the Rhetorical Dissonance of Russian Elites, Europe-Asia Studies, (9): 2022; A. Libman, and E. Vinokurov, Post-Soviet Integration and the Interaction ofty Functional Bureaucracies, Review of International Political Economy, (5):2012; A. Libman, and E. Vinokurov, Regional Integration and Economic Convergence in the Post-Soviet Space: Experience of the Decade of Growth, Journal of Common Market Studies (1): 2012; A. Libman and E. Vinokurov, Autocracies and Regional Integration: The Eurasian Case, Post-Communist Economies (3):2018; A. Libman, The Rise and Fall of the Eurasian Regionalism, The Economists' Voice, vol. 20, no. 2, 2023; D. Lane, Eurasian Integration as a Response to Neoliberal Globalization, The Eurasian Project and Europe: Regional Discontinuities and Geopolitics (eds. Lane D., Samokhvalov V.), London: Palgrave Macmillan, 2015; M. Ismayilov, Identity as a Source and an Output of Foreign Policy and Regional Security in post-Soviet Central Eurasia: Towards Integrating Nationalism Scholarship into IR Constructivism, Identity and Politics in Central Asia and the Caucasus (eds. Ayoob M., Ismayilov M.), Abingdon, New York: Routledge, 2015; E. Vinokourov, Pragmatic Eurasianism - Russia in Global Affairs, https://globalaffairs.ru/articles/pragmaticheskoe- evrazijstvo; C. Ismail, Turkish Foreign Policy: Opening New Horizons for Turkey at the Beginning of a New Millennium, TPQ: 2002; O. Tanrısever, Discourses and Politics of Eurasianism in Turkey During the 2000s in Turkey: Towards a Eurasian Shift?, ed. Valeria Talbot, 2018; M. Alrmizan, Turkish Foreign Policy in Central Asia in the Era of Erdoğan: The Convergence of Pan-Turkism, Pragmatism, and Islamism, Riyadh: 2022; S. Akkan, The Future is Eurasia,
İstanbul, 2008.

[45] С. Соколов, Философия русского зарубежья: евразийство, Улан-Удэ, 2003; S. Glazyev and I. Kefeli, On the Question of the Ideology of the Eurasian Economic Union, Eurasian Integration: economics, law, politics, 16: 1, 2022;
K. Valiyeva, Eurasian Pivot in Russian and Turkish Foreign Policy: Eurasianism: As an Ideational Premise?, in "Contemporary Turkish – Russian Relations from Past to Future", ed. Ilyas Topsakal and Ali Askerov, Istanbul University Press: 2021; S. Glazyev, Eurasian economic integration: expanding frontiers. Eurasian Integration: economics, law, politics, 1: 2016; Процессы евразийской интеграции: социально-политическое измерение, монография под общ. ред. Г.И. Осадчей, Москва: Библио-Глобус, 2018.

[46] T. Tulun, Yapıcı bir yaklaşım: kutuplaşmış bir dünyada AVİM, AVİM Yorum, No: 2021 / 34, Haziran; O. Özer, Değişen algılar, yeni fırsatlar dönemi (Gökhan Bacık), AVİM, 10.02.2009; M. Çelikpala, Rusya'daki PYD ofisini unutma, AVİM, 22.08.2016; T. Tulun, 2025 Münih Güvenlik Konferansi ve yapıcı avrasyacılığın gerekliliği, AVIM, 08.04.2025.

գաղափարական հատկանիշների համեմատական քննության և գործնական կիրառելիության ուսումնասիրության միջոցով:

Ատենախոսության կառուցվածքը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության առարկան, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական սահմանները, մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, վերլուծվում է հետազոտական թեմայի աղբյուրագիտական հիմքը, գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին՝ «**Եվրասիականության ձևավորման պատմական հիմքերը և զարգացման փուլերը**» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից *(«Ռուսական եվրասիականություն», «Թուրքական եվրասիականություն»*): Գլխում ներկայացվում է եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերի ձևավորմանն ու զարգացմանը նպաստած գաղափարական, պատմական և քաղաքական նախադրյալները: Քննարկվում է ռուսական եվրասիականության փուլային զարգացումը, որը ներկայացված է երեք հիմնական շրջաններով՝ դասական եվրասիականություն, գումիլյովյան եվրասիականություն և նեո-եվրասիականություն: Վերլուծվում են յուրաքանչյուր փուլի տեսական առանձնահատկությունները, գաղափարական շարունակականության և փոխակերպման դրսևորումները, ինչպես նաև դրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները: Ներկայացվում են Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիայում եվրասիականության տարածման հիմքերը: Դասակարգվում են թուրքական եվրասիականության հիմնական մոտեցումներն ու ուղղությունները: Ներկայացվում են այդ ուղղությունների զարգացման ընթացքը և Թուրքիայում տարածված այլ գաղափարախոսություններից կրած ազդեցությունը: Քննարկվում են դրանց միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները:

Ատենախոսության երկրորդ՝ «**Եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերի հիմնական հատկանիշների քննություն**» գլուխը բաղկացած է վեց ենթագլխից *(«Եվրասիայի աշխարհագրական և աշխարհաքաղաքական սահմանումները», «Հակաարևմտականությունը որպես եվրասիականության առանցքային գաղափար», «Եվրասիա աշխարհաքաղաքական բևեռի ձևավորման տեսլականը»,«Ազգայնականության տեղայնացումը եվրասիական հայեցակարգերում», «Կրոնի ազդեցությունը եվրասիական գաղափարների վրա», «Ընդհանուր մշակութային հիմքի և եվրասիական յուրահատուկ քաղաքակրթության գաղափարը»*): Գլխում

ներկայացվում է եվրասիականության ռուսական և թուրքական հայեցակարգերի համեմատական վերլուծություն: Վեր են հանվում այդ հայեցակարգերում համադրելի առանցքային գաղափարները, ինչպես օրինակ՝ եվրասիական յուրօրինակ քաղաքակրթության, Եվրասիայի ժողովուրդների ընդհանուր մշակութային հիմքի, հակաարևմտականության և գլոբալիզմի դեմ պայքարի դրույթները: Ուսումնասիրվում է ռուսական և թուրքական եվրասիականություններում առկա քաղաքակրթական մոտեցումը, որի շրջանակներում Եվրասիան ներկայացվում է որպես ինքնուրույն և առանձնահատուկ քաղաքակրթական տարածք՝ տարբերվող թե՛ Արևմուտքից, թե՛ Արևելքից: Հակաարևմտականության և գլոբալիզմի դեմ պայքարի գաղափարը քննարկվում է որպես եվրասիական ինքնուրույն աշխարհաքաղաքական և քաղաքակրթական ուղու հիմնավորման կարևոր բաղադրիչ: Այս համատեքստում ներկայացվում է եվրասիական ինքնուրույն աշխարհաքաղաքական բևեռ ձևավորելու տեսլականը թե՛ ռուսական, թե՛ թուրքական տարբերակներում, ինչպես նաև դրա կապը բազմաբևեռ միջազգային համակարգի ձևավորման գաղափարի հետ: Վերլուծվում են Եվրասիայի ժողովուրդների ընդհանուր պատմամշակութային ժառանգության և համատեղ զարգացման գաղափարները՝ գնահատելով դրանց տեղն ու նշանակությունը ռուսական և թուրքական եվրասիականության մեջ: Ներկայացվում են Եվրասիայի աշխարհագրական և աշխարհաքաղաքական սահմանումները: Քննարկվում է, թե ինչպես են ռուսական և թուրքական մոտեցումները տարբեր կերպ պատկերացնում Եվրասիայի աշխարհագրական սահմաններն ու աշխարհաքաղաքական կառուցվածքը: Քննարկվում են ռուսական և թուրքական տարբերակներում ներկայացվող ազգայնականության բաց և փակ մոդելների տեղայնացման առանձնահատկությունները, դրանց ներառական կամ բացառող բնույթը և ազդեցությունը եվրասիական ինքնության ձևավորման վրա: Ներկայացվում է կրոնի, մասնավորապես՝ ուղղափառ քրիստոնեության և իսլամի դերը հայեցակարգերի գաղափարական կառուցվածքում: Համեմատվում են ռուսական և թուրքական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ հատկանիշները՝ բացահայտելով դրանց համադրելի և հակադրելի կողմերը:

Ատենախոսության երրորդ՝ «**Եվրասիականության գաղափարների գործածումը Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերում**» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից *(«Եվրասիական տնտեսական միության օրինակը», «Թյուրքական պետությունների կազմակերպության օրինակը», «Ռուս-թուրքական հարաբերությունները եվրասիականության դիտանկյունից»*): Գլխում ուսումնասիրվում է եվրասիականության գործիքայնացումը և դրա դրսևորումները Ռուսաստանի ու Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ: Որպես ուսումնասիրության օրինակներ դիտարկվում են Եվրասիական տնտեսական միությունը և Թյուրքական պետությունների կազմակերպությունը, որոնք ներկայացվում են որպես

տարածաշրջանային ինտեգրացիոն հարթակներ՝ եվրասիական գաղափարների գործնական կիրառման համար: Վերլուծվում է, թե ինչպես են Ռուսաստանն ու Թուրքիան եվրասիականության առանցքային դրույթները ներառում իրենց ինտեգրացիոն ծրագրերի գաղափարական հիմքում՝ նպատակ ունենալով խթանել տարածաշրջանային համախմբումը և ամրապնդել սեփական դիրքերը տարածաշրջանում: Քննարկվում է եվրասիականության անդրազգային գաղափարական բնույթը: Եվրասիականությունը դիտարկվում է որպես անդրազգային գաղափարական կառուցակարգ, որը ձգտում է ձևավորել պետական սահմանները գերազանցող քաղաքական, տնտեսական, մշակութային և ինքնութենական կապերի համակարգ: Անդրազգայնության տեսական շրջանակի կիրառմամբ ուսումնասիրվում է, թե ինչպես են եվրասիական ինտեգրացիոն ծրագրերը նպաստում բազմակողմ փոխգործակցության, ընդհանուր մշակութային տարածքների ձևավորման, մասնակից պետությունների միջև տարածաշրջանային ինքնությունների ձևավորման միջոցով կայուն կապերի հաստատման գործընթացին: Եվրասիականության դիտանկյունից ներկայացվում են նաև ռուս-թուրքական հարաբերությունները: Քննարկվում են ռուսական և թուրքական եվրասիականության ներկայացուցիչների կողմից երկու պետությունների միջև համագործակցության և մրցակցության հնարավորություններին տրվող գնահատականները: Վերլուծվում է, թե այդ հարաբերությունները ինչ տեղ են զբաղեցնում եվրասիականության տարբեր մեկնաբանություններում:

Եզրակացությունում ամփոփվել են ուսումնասիրության վերջնարդյունքները.

Ռուսական եվրասիականությունը, ստեղծվելով շուրջ մեկ դար առաջ, անցել է վերափոխումների երկար ուղի՝ փիլիսոփայական-գաղափարական շարժումից մինչև պետական կառավարման քաղաքականության բաղադրիչ: Այն գիտական ակադեմիական շրջանակներում պահպանում է իր արդիականությունը և շարունակում զարգանալ ու վերաիմաստավորվել՝ անփոփոխ պահելով հենքային գաղափարների ամբողջությունը: Եվրասիականության ռուսական և թուրքական տարբերակների բնորոշ հատկանիշներից է հոգևոր-կրոնական բովանդակության համադրումը աշխարհիկնյութականի հետ: Այսպիսի մոտեցումը եվրասիականությանը տալիս է միաժամանակ և՛ երկիմաստություն ու հակասությունների բազմազանություն, և՛ հատուկ գաղափարական առաձգականություն, ինչն օգնում է նրան վերաձևակերպվել և զարգանալ ժամանակից անկախ:

Եվրոպայում հաստատված ռուս մտավորականները փորձել են ստեղծել մտածողության եզակի համակարգ՝ ուրույն առանցքային գաղափարներով: Զարգացման տարբեր փուլեր անցնելով ու հղկվելով՝ ժամանակի ընթացքում այն վերածվել է անդրազգային գաղափարախոսության: Անդրազգայնությունը ձևավորում է մարդկանց կամ հասարակություններին միավորող բազմակի միջսահմանային կապեր կամ

փոխազդեցություններ: Ռուսական եվրասիականությունը, իր անփոփոխ գաղափարական ցուցիչների բնույթով, կարող է դիտարկվել անդրազգայնության համատեքստում:

Թուրքիայում եվրասիականությունը գիտական և քաղաքական հետաքրքրություն ձեռք բերեց 1990-ականներին՝ իր վրա կրելով ռուսական եվրասիականության ազդեցությունը: Արված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ թուրքական եվրասիականությունը, որպես առանձին գաղափարախոսություն, դեռ գտնվում է ձևավորման փուլում: Կարելի է ասել, որ եվրասիականությունը ծառայում է որպես Թուրքիայում ավանդաբար օգտագործվող գաղափարախոսությունների համար նոր փաթեթավորում: Ի տարբերություն ռուսական եվրասիականության, որն ունի լավ արտահայտված առանձին գիտական և քաղաքական բնորոշում, թուրքական եվրասիականությունում այս երկու հարթությունները հիմնականում մեկտեղված են:

Եվրասիականության ռուսական և թուրքական տարբերակների միջև առանցքային տարբերության պատճառներից են և՛ դրանց զարգացման ժամանակային ընդգրկունության մեծ տարբերությունը, և՛ ձևավորման բնույթը: Ինչպես արդեն նշվեց, ռուսական եվրասիականությունը ի սկզբանե ձևավորվել էր որպես գաղափարական-փիլիսոփայական շարժում՝ ներքին բոլշևիկներից ու արտաքին «կապիտալիստ-իմպերիալիստներից Ռուսաստանի փրկությանը» հասնելու համար՝ պետություն-երկրամաս ձևավորելու ուտոպիստական տեսլականի միջոցով: Մինչդեռ թուրքական եվրասիականությունը ձևավորվել է որպես Խորհրդային Միության փլուզումից հետո հետխորհրդային Եվրասիայում Թուրքիայի առաջ բացված նոր հնարավորությունները համակարգելուն ու վերլուծելուն միտված քաղաքական նոր խոսույթ՝ արդեն իսկ գոյություն ունեցող գաղափարախոսությունների առանցքում: Այսինքն, թուրքական եվրասիականությունն ի սկզբանե միտված էր օգտակար գործնական քայլերի պլան մշակելուն՝ Թուրքիայի նոր տարածաշրջանային քաղաքականությանը խթանելու համար: Այս կերպ, թուրքական եվրասիականությունը հղկվում և գաղափարախոսական կառուցվածք է ստանում պրակտիկ գործածության միջոցով՝ ի հակադրություն ռուսական եվրասիականության:

Թուրքական եվրասիականության տարբեր հայեցակարգեր դեռ անցնում են ձևավորման և գաղափարական հստակեցման փուլերով և ոչ բոլոր տարբերակներն են դիմանում ժամանակի քննությանը՝ կորցնելով իրենց արդիականությունը, ինչպես օրինակ՝ արևմտյան կողմնորոշմամբ եվրասիական հայեցակարգը, համաձայն որի՝Թուրքիան պետք է դառնար կամուրջ՝ Եվրասիան ԵՄ-ին միավորելու ճանապարհին: Թուրքիայում ներկայումս իրար զուգահեռ զարգանում են մի քանի եվրասիական հայեցակարգեր, դժվար է գնահատել, թե դրանցից որը (կամ գուցե բոլորի համախումբը) հետագայում կվերածվի գաղափարախոսության:

Չնայած նշված հայեցակարգային տարբերություններին՝ եվրասիականության ռուսական ու թուրքական տարբերակները համադրելի են, քանի որ առանցքում ունեն

ընդհանուր բնութագրիչներ: Դրանք արտացոլված են եվրասիական ընդհանուր մշակույթի, ժողովուրդներին միավորող պատմական անցյալի, եվրասիական քաղաքակրթության ու միասնական բևեռի ձևավորման գաղափարներում: Թվարկվածները և՛ ռուսական, և՛ թուրքական եվրասիականություններում նույն կերպ են մեկնաբանվում, իհարկե, կենտրոնում ունենալով կա՛մ Ռուսաստանին, կա՛մ Թուրքիային: Հայեցակարգերում գաղափարական գլխավոր տարբերություններից է եվրասիական ազգայնականության թեման:

Ռուսական եվրասիականությունում ազգայնականությունը նույնպես բացատրվում է մշակութային ընդհանրությունների միջոցով: Ռուս դասական եվրասիականներն ազգայինը հակադրում էին համամարդկայինին, տեղայինը՝ ընդհանուրին: Ազգայնականությունը հիմնվում էր ընդհանուր եվրասիական մշակույթի և քաղաքակրթության վրա, որը կարող էր միավորել Եվրասիայի բոլոր ժողովուրդներին: Այսպիսով առաջարկվում էր բաց ազգայնականության մոդելը: Ռուսական եվրասիականության մեջ ազգայնականության հարցն ունի անդրազգային գաղափարախոսություններին բնորոշ բազմազգ և բազմամշակութային հասարակություններում կիրառվելու ներուժ, քանի որ ընդգծում է ազգայնականության ոչ միայն էթնիկ, այլև քաղաքական բաղադրիչների կարևորությունը: Եվրասիականության մեջ քաղաքական և էթնիկ ազգայնականության սինթեզը ծառայում է եվրասիական ժողովուրդների զարգացման վայրի, բնակչության, պատմության, սոցիալ-մշակութային և կրոնական գործոնների միասնությանը: Մյուս կողմից՝ ազգայնականության բացահայտ ռասիստական տեսակի օգտագործումը թուրքական որոշ տարբերակներում, որը շեշտադրում էր ազգային ինքնության կենսաբանական կողմը, լուրջ գաղափարական հակասություն է առաջացնում եվրասիականության ռուսական ու թուրքական հայեցակարգերում: Կարելի է եզրակացնել, որ ի տարբերություն եվրասիականության այլ գաղափարական ցուցիչների, որոնք հեշտորեն կարելի է ադապտացնել Թուրքիայում արդեն գոյություն ունեցող գաղափարախոսությունների բովանդակությանը և համատեղել տարբեր հայեցակարգեր մեկ համակարգում, ազգայնականության ընկալման հարցը կարելի է դիտարկել որպես տարբերակիչ հատկանիշ: Այն կարող է հիմք դառնալ եվրասիականության առանձին և ինքնուրույն թուրքական տարբերակի ձևավորման համար:

Առհասարակ, հնարավոր չէ խոսել ընդհանրական կամ որոշակի «Եվրասիա» հասկացության մասին: Այլ կերպ ասած, Թուրքիայում ու Ռուսաստանում ներկայացվող Եվրասիայի տարածական ու բովանդակային սահմանումները շարունակ փոփոխվում են, և այդ տարբեր ընկալումները հակադրվում են միմյանց: Այնուամենայնիվ, բոլոր մոտեցումներում ընդհանուր գիծն այն է, որ Թուրքիային և Ռուսաստանին տրվում է տարածաշրջանային կենտրոնի դեր, որի շուրջ պետք է համախմբվեն մյուս ժողովուրդները: Ընդհանուր առմամբ, ռուս և թուրք եվրասիականները համակարծիք են այն հարցում, որ Թուրքիան և Ռուսաստանը պետք է դառնան բնական դաշնակիցներ:

Ռուսաստան-Թուրքիա դաշնակցային հարաբերությունների ձևավորումը, ըստ եվրասիականների, պայմանավորված է մի կողմից Ռուսաստանի և Թուրքիայի նկատմամբ «ատլանտիզմի» թշնամանքով և դավաճանական քաղաքականությամբ, մյուս կողմից՝ երկու ժողովուրդների միջև առկա պատմական նմանություններով:

Համաձայն ռուսական տարբերակի՝ Ռուսաստան-Եվրասիան մեկ սերտաճած ամբողջություն է՝ տարբեր Ասիայից ու Եվրոպայից: Թուրքական հայեցակարգերում, մյուս կողմից, աշխարհագրական սահմանները գծագրվում են սեփական գերակայության ու ազգային շահերին համապատասխան՝ Եվրասիան այնտեղ է, որտեղ Թուրքիայի քաղաքական, տնտեսական, մշակութային ազդեցությունը տարածվում է: Նման մոտեցումը ավելի ուշ իր արտացոլումն է գտել Ռուսաստանի և Թուրքիայի գլխավորած ինտեգրացիոն ծրագրերի գաղափարական համատեքստում: Եվրասիականությունը ընդգրկում է աշխարհագրական, մշակութային և քաղաքական բաղադրիչներ, որոնք առանձնահատուկ դեր են խաղում Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանային ռազմավարությունների և գաղափարական մոտեցումների մեջ:

Ռուս դասական եվրասիականների միտումը՝ եվրասիականության միջոցով տերության կայսերական մոդելի արդարացումն ու հարմարեցումը փոփոխվող ժամանակներին, հետագայում իր վերախմբագրված արտացոլումը գտավ նեո-եվրասիականների մոտ: Չնայած գերիշխանություն հաստատելու նպատակի առերես հերքմանը, եվրասիական բևեռի կամ բլոկի ձևավորումը ենթադրում է ռուսական կամ թուրքական գերիշխանության հաստատում հետխորհրդային տարածքում՝ բազմակենտրոն աշխարհի ձևավորման շղարշի տակ: Եվրասիականությունը, իրեն հատուկ ոչ միանշանակ և տարընթերցումներ առաջացնող բնորոշումներով, հնարավորություն է տալիս Ռուսաստանին ու Թուրքիային գաղափարապես հիմնավորել իրենց տարածաշրջանային հետկայսերական քաղաքականությունը:

Չնայած եվրասիականության ռուսական և թուրքական տարբերակները գտնվում են զարգացման տարբեր փուլերում, դրանք լավագույնս գործիքայնացվում են ինտեգրացիոն անդրազգային ծրագրերում՝ որպես գաղափարական հիմք: ԵԱՏՄ-ն ու ԹՊԿ-ն ներկայումս գործում և զարգանում են իրար զուգահեռ և տարածաշրջանում դրանց կողմից առաջ քաշած նպատակները մեծամասամբ համընկնում են: ԵԱՏՄ-ի ու ԹՊԿ-ի միջոցով Ռուսաստանի և Թուրքիայի միջև փոխշահավետ համաձայնության հասնելու համար՝ լավագույնս կարող է ծառայել երկու ինտեգրացիոն ծրագրերում գործիքայնացված ընդհանուր գաղափարական հիմքը և ինտեգրացիայի միջոցով անդրազգային ինքնության ձևավորմանը միտված գործնական քայլերը:

Քանի որ թուրքական եվրասիականությունը հղկվում և ամբողջանում է գործնական կիրառման մեջ, կարելի է ենթադրել, որ թուրքական ուրույն եվրասիական անդրազգային գաղափարախոսության ձևավորումն ավարտուն փուլի կհասնի հենց այս ճանապարհով: Նկատի առնելով, որ անդրազգայնությունը գերազանցում է ազգային բնորոշվող

տարածքը, որպես ինքնությունների և հասարակությունների համագործակցության կենտրոնական միջավայր, Ռուսաստանի և Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը և քննարկված կազմակերպություններում առաջ քաշված տարածաշրջանային ինքնության ձևավորման միտումը լիովին համապատասխանում են անդրազգային ինտեգրացիայի չափումներին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Թորոսյան Վ., "Իսլամի խնդիրը ռուսական եվրասիականության մեջ," Տարածաշրջան և աշխարհ, 2021, N.4, 98-106.
2. Torosyan V., "Unpacking the Concept of Nationalism within Russian Eurasianism," Contemporary Eurasia, 2022, 11 (1), 27-43.
3. Torosyan V., "Multi-faceted Eurasianism: a comparison in practice," Review of Economics and Political Science, 2023, vol. 8 No. 5, pp. 380-393. (Scopus, Q2)
4. Torosyan V., "The geographical and geopolitical understanding of Eurasia in Russian and Turkish Eurasianist discourses," Bulletin of the Institute of Oriental Studies, 2026, 6 (1), 14-32.

Торосян Вероника Ашотовна

Русские и турецкие концепции евразийства: сравнительный анализ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 00.02 «Всемирная история».

Защита диссертации состоится 13-го июля 2026 г. в 12:00 на заседании специализированного совета 006 "Всемирная история", действующего при Институте Востоковедения, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

Евразийство как философское и идеологическое течение сформировалось в начале 1920-х годов в среде русской эмигрантской интеллектуальной элиты, обосновавшейся в странах Европы. Первоначально оно возникло как самостоятельная концепция осмысления цивилизационной идентичности России и её исторического пути развития. В 1990-е отдельные положения и идеи евразийства были адаптированы к внешнеполитическим и региональным стратегиям Турции, что существенно расширило географические и концептуальные рамки данного феномена, а также усилило научный интерес к его изучению. Многообразие существующих интерпретаций евразийства, нередко существенно различающихся по своим идеологическим и политическим основаниям, обусловливает сохранение исследовательского интереса к данной проблематике и её актуальность в современных научных дискуссиях. Актуальность и научная значимость исследования также обусловлены тем, что Россия посредством интеграционных проектов стремится к формированию общей евразийской региональной идентичности, основанной на исторических, культурных и цивилизационных общностях. В свою очередь, Турция переосмысливает концепцию «тюркского мира» через призму евразийства, расширяя своё политическое влияние и геополитическое присутствие в сопредельных регионах. Внешняя и региональная политика России и Турции оказывает непосредственное влияние на государства постсоветского пространства, включая Республику Армения. Данное обстоятельство обусловливает необходимость углублённого изучения стратегических ориентиров этих государств и их идеологических оснований, в контексте которых всесторонний и критический анализ евразийства приобретает особую научную значимость. Изучение данной проблематики имеет важное теоретическое и методологическое значение, поскольку позволяет выявить механизмы и историко-политические факторы, под воздействием которых транснациональные идеологии трансформируются, адаптируются к новым условиям и используются в качестве инструмента политической практики. Именно этим объясняется сохраняющийся научный интерес к феномену евразийства.

Целью диссертации является проведение сравнительного анализа русской и турецкой концепций евразийства.

Рассматриваемая тема предполагает решения следующих задач: а) сравнить этапы формирования русской и турецкой направлений евразийства, а также исторических

предпосылок их становления; б) выявить и сопоставить ключевые характеристики русской и турецкой концепций евразийства; в) проанализировать механизмы инструментализации евразийства в русских и турецких программах региональной интеграции; г) рассмотреть идеологическую составляющую, определяющую потенциал сотрудничества и/или конкуренцию между указанными государствами; д) исследовать меры, предпринимаемые Россией и Турцией в рамках евразийских интеграционных проектов, направленные на формирование новой региональной идентичности народов, объединённых историческими и культурными связями.

В исследовании использовались следующие методы: дискурс анализа применялся для выявления сопоставимых характеристик русской и турецкой концепций евразийства. Сравнительный анализ использовался для изучения их идеологических оснований, при этом сопоставлялись ключевые идеи, рассматриваемые как базовые в обеих концепциях, а также определялись их сходства и различия. На основе полученных результатов применялся тематический анализ, направленный на выявление общих закономерностей в русской и турецкой версиях евразийства. В третьей главе использовался метод множественного кейс-стади, позволивший рассмотреть инструментализацию евразийства в российских и турецких проектах региональной интеграции на примерах Евразийского экономического союза и Организации тюркских государств. Теоретической основой исследования выступает концепция транснационализма как аналитическая рамка, объясняющая механизмы функционирования и практическую применимость евразийства в региональных и наднациональных контекстах.

В диссертации впервые систематизированы и представлены идеологические характеристики, составляющие содержательное ядро евразийства, включая географические интерпретации Евразии и концепцию формирования единого геополитического полюса, антизападнические установки, роль евразийского национализма, религиозный фактор в евразийстве, а также идея общей культурной основы и евразийской цивилизации. Указанные элементы сопоставлены в русской и турецкой версиях евразийства посредством сравнительного тематического анализа, позволившего выявить их ключевые сходства и различия. Впервые транснационализм использован в качестве теоретической основы для анализа идеологических оснований программ региональной интеграции России и Турции. В работе обосновывается целесообразность применения транснационализма как аналитической перспективы в исследованиях идеологических конструкций, в том числе в контексте евразийства. В качестве примеров локализации транснациональной интеграционной модели сравниваются идеологические основы Евразийского экономического союза и Организации тюркских государств. Это позволило выявить особенности инструментализации евразийства Россией и Турцией, а также продемонстрировать его идеологическую гибкость и многоуровневый характер применения.

Torosyan Veronika

Russian and Turkish Concepts of Eurasianism: A Comparative Analysis

Dissertation for the degree of Candidate of Historical Sciences on the specialization of "World History" 00.02.

The defense of the dissertation will be held on July 13, 2026, at 12:00 at the session of the HESC Specialized Council 006 on "World History" at the Institute of Oriental Studies. Address: 24/4 Marshal Baghramyan Ave., Yerevan, 0019.

SUMMARY

Eurasianism, as a philosophical-ideological movement, emerged in the early 1920s among Russian emigrant intellectuals in Europe. Although it was initially developed as an alternative interpretation of Russia's civilizational identity and historical trajectory, it was reinterpreted and incorporated into Turkey's foreign and regional policy discourse after the collapse of the USSR. This development enhances the scientific relevance of the topic and maintains academic interest in its theoretical examination. Diverse and at times contradictory approaches to Eurasianism continue to evolve and remain influential in contemporary intellectual and political debates. The relevance and scholarly significance of this research are further reinforced by the fact that Russia, through its integration initiatives, seeks to construct a shared Eurasian regional identity grounded in historical, cultural, and civilizational commonalities. Concurrently, Turkey is reconfiguring the concept of the "Turkic world" by integrating elements of Eurasianism, thereby broadening its political reach and geopolitical engagement across adjacent regions. The foreign and regional policies of Russia and Turkey exert a direct influence on the post-Soviet region, including, particularly, Armenia. This circumstance emphasises the necessity of an in-depth understanding of Russia's and Turkey's strategic orientations and underlying ideological frameworks, where a thorough and critical study of Eurasianism takes on special significance. This study also carries substantial theoretical and methodological importance, as it contributes to revealing of the mechanisms through which transnational ideologies are transformed, adapted, and instrumentalized under the influence of historical and political processes.

The aim of this study is to conduct a comparative analysis of the Russian and Turkish concepts of Eurasianism.

To that aim, the following research objectives are formulated: a) to compare the stages of development of the Russian and Turkish variations of Eurasianism, as well as the historical foundations that contributed to their emergence; b) to identify and compare the key ideological characteristics underlying the Russian and Turkish conceptualizations of Eurasianism; c) to examine the instrumentalization of Eurasianism within Russian and Turkish regional integration programs; d) to analyze the ideological dimension that shapes the potential for both competition and cooperation between these states; e) to investigate the measures undertaken by Russia and Turkey within the framework of Eurasian integration

initiatives aimed at fostering a new regional identity among peoples sharing historical and cultural affinities.

Qualitative research methods were applied in the study. Discourse analysis was used to identify comparable features of the Russian and Turkish concepts of Eurasianism. Comparative analysis was applied to examine the underlying ideological dimensions, with particular attention to the key ideas regarded as foundational in both frameworks. This method made it possible to find both the similarities and differences between Russian and Turkish concepts of Eurasianism. On this basis, thematic analysis was conducted to reveal common patterns in the Russian and Turkish interpretations of Eurasianism. In the third chapter, a multiple case study method was employed to examine the instrumentalization of Eurasianism within Russian and Turkish regional integration projects, using the Eurasian Economic Union and the Organization of Turkic States as empirical cases. The theoretical framework of transnationalism is used as a systemic perspective for explaining Eurasianism. It was applied to analyze the practical applicability of Eurasianism in regional and transnational contexts.

The dissertation systematizes and presents, for the first time, the ideological features that constitute the substantive core of Eurasianism, including the geographical conceptualization of Eurasia and the idea of forming a unifying geopolitical pole; anti-Western orientations in both Russian and Turkish concepts; the role of Eurasian nationalism; the influence of religion in Eurasianism; as well as the notion of a shared cultural core and a distinct Eurasian civilization. These elements are comparatively examined in the Russian and Turkish variations of Eurasianism through thematic analysis, which reveals their principal similarities and differences. For the first time, transnationalism is employed as a theoretical framework for the analysis of the ideological foundations of Russia's and Turkey's regional integration programs. The study argues for the relevance of transnationalism as an analytical perspective in ideological research, particularly in analyzing Eurasianism. As empirical illustrations of the localization of a transnational integration model, the ideological foundations of the Eurasian Economic Union and the Organization of Turkic States are compared for the first time. This allows for the identification of specific patterns in the instrumentalization of Eurasianism by Russia and Turkey, while also demonstrating its ideological flexibility and multi-layered applicability.